ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԸ 21-ՐԴ ԴԱՐԻ ՇԵՄԻՆ

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

Երեւան 29-30 մայիս
1998 թ.

ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓԻՒՌՔ. ԱԶԳԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐ

Այս գիտաժողովի առաջին նիստին ներկայացրած զեկոյցիս մէջ մատնանշեցի համազգային տարողութիւն ունեցող հարցեր, որոնք, ինչպէս ասացի, շատ նուրբ, ռազմավարական ծրագրումի կարիքն ունեն. նշեցի, թէ անկախ Հայաստանի այս նոր փուլը եւ ապագայի տեսլականը մի նոր հարթակի վրայ է զետեղել այս հարցերը, որոնք, հաւատում եմ, միայն ու միայն Սփիւռք-Հայրենիք առողջ համագործակցութեամբ պիտի լուծուեն: Այդ հարցերից իւրաքանչիւրը կարող է մի գիտաժողովի նիւթ դառնալ, եթէ լրջօրէն փորձում ենք գտնել իւրաքանչիւրի լաւագոյն լուծումը, որ պիտի պարփակի գաղափարաբանութիւն, նպատակ, միջոց ու գործելակերպ, որ պիտի ծառայի իբր առաջնորդ հետագայ տարիների գործունէութեան: Այդ հարցերի մէջ են երիտասարդութեան փոխանցելիք կրօնական դաստիարակութեան հարցը՝ առաջն առնելու համար աղանդաւորական շարժումների ներթափանցումների. Անթիլեաս - Էջմիածին մօտիկ համագործակցութիւնը հոգեւոր գործունէութեամբ ամրակայելու համար Հայ եկեղեցու դերը մեր առօրեայ կեանքում եւ շեշտաւորելու համար նրա ազդեցութիւնը մեր բարոյական եւ մարդասիրական աշխարհայեացքի վրայ. Սփիւռք-Հայրենիք նպատակադրուած քննարկումը Սփիւռքի ապագայի՝ այսօրուայ Հայաստանի իրողութեան լոյսի տակ եւ այս ծիրի մէջ՝ նաեւ քննարկումը սփիւռքահայութեան հոգեբանութեան մեթամորֆոսի, մանաւանդ՝ Հայաստանից արտագաղթած հսկայ զանգուածի թողած ազդեցութիւնը Սփիւռքի հայաշատ գաղութների նկարագրի ու կառոյցի վրայ. սփիւռքահայի ազգային ինքնութիւնը իբրեւ քաղաքականութիւն եւ այդ ինքնութեան յարաբերութիւնը հիւրընկալ երկրների մշակոյթի եւ ազգային ինքնութեան հետ կամ յառաջացումը ազգային գիտակցութեան եւ ինքնութեան նոր հասկացողութեան, որ հաշտեցուած լինի սփիւռքահայի քաղաքացիական պատկանելութեան հետ. ազգային գիտակցութեան ձեւաւորում Հայաստանում, այն, որ պայքարել ենք պահելու համայնավար վարչակարգի օրոք եւ անուշադրութեան մատնել վերջին տարիներին. եւ վերջապէս Հայաստանի կրթական համակարգի, մանաւանդ հայեցի նիւթերի դասաւանդման ծրագրաւորման, նորագոյն մեթոդների ու միջոցների կիրառմամբ դասագրքերի եւ ուսուցիչների պատրաստութիւն:

Մօտ մնալու համար թէ՛ իմ մասնագիտութեան ու փորձառութեան եւ թէ՛ այս գիտաժողովի սահմանած թեմաներին, պիտի կենտրոնանամ այդ հարցերից երկուսի վրայ միասնաբար՝ սփիւռքահայ եւ հայրենի մատաղ սերունդի հայեցի դաստիարակութիւնը հայակերտման եւ մեր ազգային նպատակների իրագործման իբրեւ անհրաժեշտութիւն, կամ ինչպէս զեկոյցիս վերնագրով եմ ձեւակերպել, հայրենի եւ սփիւռքեան մատաղ սերունդների ծրագրած եւ համադրուած ազգային դաստիարակութիւնը որպէս անկիւնաքար «Մէկ Ազգ, Մէկ Հայրենիք» տեսլականի եւ «Ամբողջական Հայաստան» գերագոյն նպատակի իրագործման:

Սփիւռք, Հայրենիք. եօթանասուն տարի կրկնել ենք այս զոյգ յորջորջումները եւ դրանց մէջ դրել ենք մէկ ամբողջ իմաստային ցանց, երկու յղացքների երկու տարբեր ու համակ տարբերող համակարգեր: Այսօր եկել ենք քով քովի ու փորձում ենք մարսել այդ յղացքները, բնորոշել տարբերութիւններն ու գտնել սիեզիսը, որ դառնայ խարիսխը ապագայ համագործակցութեան: Ուշացել ենք: Սա պիտի կատարուէր 91-ին, երբ Հայաստանը յայտարարեց իր անկախութիւնը: Տաք էր մթնոլորտը: Սփիւռք-Հայրենիք սիրտ, հոգի, եռանդ, ուժ ու բռունցք զօդուած էին իրարու: Չեղաւ: Ժամանակի իշխանութիւնը այդ լայնախոհութիւնը ու բարեմտութիւնը չունեցաւ: Ազգային գաղափարախօսութիւնը, որ հիմք պիտի ծառայէր նաեւ այդ համագործակցութեան, հեգնանքով մէկ կողմ նետուեց: Այսօր կանգնած ենք նախասկիզբի սահմանին: Պիտի արագացնենք մեր քայլերը որովհետեւ ինչպէս երէկ ասացի սկսում ենք ո՛չ թէ զերոյից այլ բացասականից:

Սփիւռք-Հայրենիք՝ երկու տարբեր հասկացողութիւններ

Սփիւռքը սփռուածութիւն է, արտացոլում է մի ժողովրդի իրավիճակ, որ ազգ չի, չունի հայրենիք եւ ենթարկւում է նախ՝ իր սփռուածութեան ծնունդ տուող ազդակներին, ապա՝ իր ապրած վայրի թելադրած պայմաններին: Հայ ժողովուրդը 1920-ից յետոյ ապրեց այս իրավիճակը, ի սփիւռս աշխարհի համայնքներ կազմեց ու կազմակերպուեց: Ի՞նչն էր մղիչ ուժը կազմակերպուելու՝ ապագայի յոյսը, տեսլականը՝ ապագայի Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի կերտման՝ հայահաւաքման ու հողահաւաքման: Այս գաղափարի շուրջ համախմբուելով սփիւռքահայութեան մի հսկայ հատուածը աստիճանաբար ստեղծեց իր կառոյցները՝ եկեղեցին, դպրոցները, միութիւնները: Այդ տեսլականի համար պէտք էր պատրաստուել, սերունդներ պատրաստել, այսինքն՝ առնուազն հայ մնալ: Իսկ ո՞ւր էր հայրենիքի այն բեկորը, որ ազատուել էր թուրքի եաթաղանից, որ պիտի կերտէր մնացորդացի հայ հոգին, պիտի դառնար աղբիւրը սփիւռքահայութեան յոյսի ներշնչման եւ ջանքերի միացման, որ պիտի դիւրացնէր նրա պայքարը

գոյատեւման: Օտարակուլ հայրենիքը ստանձնեց իր դերը, բայց կերտելու համար «սովետական մարդը» իր ապազգային ու նոյնիսկ ապաքաղաքական կերպարով ու իր բարոյական իւրայատուկ հասկացողութիւններով, նկարագրով: Օտարակուլ հայրենիքը ստանձնեց իր դերը, բայց դժբախտաբար ո՛չ թէ Սփիւռքի սփռւածութեան դէմ, այլ՝ ընդդէմ սփռւածութեան մէջ կատարւող միացման ճիգերի՝ շեշտաւորելով ծնունդ առած որեւէ տարաձայնութիւն ու հակամարտութեան. նպատակը՝ համայնավար վարչակարգի տիրապետութեան ապահովում. միջոցը՝ «բաժնէ՛, որ տիրես» երկու հազարամեայ կարգախօսը: Արդիւնքը՝ նախա 1988-եան Սփիւռքի պատկերը՝ բաժանւած եկեղեցիների իրենց տարբեր կառոյցներով, իրարու դէմ կռւի ելած կուսակցութիւններ եւ այս բոլորի կողքին հետզհետէ աճող լուսանցքը այն հայերի, որոնք կորցնում էին հետաքրքրութիւնն ու եռանդը դէպի հայն ու հայկականը, ձուլւելով, ուծանալով, կամ այլ յարանւանութիւնների մէջ գտնելով իրենց հոգեկան բաւարարութիւնը: Արդիւնքը՝ նախա 1988-եան հայրենի ժողովրդի տխուր իրավիճակը եւ հետզհետէ խորացող վիհը երկու հատւածների միջեւ:

Ճիգ միացումի

Իրագործման միայն մէկ ճամբայ գոյութիւն ունի՝ որդեգրել մէկ ու միակ գաղափարախօսութիւն, ազգային գաղափարախօսութիւն, որ յենւած լինի հայահաւաքի ու հողահաւաքի սկզբունքների վրայ: Գաղափարախօսութիւնը կը գծի ճամբան կը պայմանաւորի միջոցները: Հայաստանը եւ Սփիւռքը փոխադարձ դերակատարութիւն կունենան երկու միջավայրերի պայմաններն ու հոգեբանութիւնը մօտեցնելու - նման դէպքում պարզ է, որ կը բացառւի նախապէս պարտադրւած երկու բացարձակ դերեր՝ Սփիւռքը դրամ տւող, Հայաստանի իշխանութիւնը՝ առնող:

Ծրագրւած բազմակողմանի համագործակցութիւնը կեանքի բոլոր բնագաւառներում ենթադրում է կազմակերպւածութիւն, շեշտւած ազգային նկարագրի, տրամաբանւած ազգային պատկանելութիւն: Իսկ այս բոլորի հիմքում ընկած է նոր սերնդի դաստիարակութիւնը, թէ՛ Սփիւռքում եւ թէ՛ Հայրենիքում, իբրեւ գիտակից ու յանձնառու հայ, ատակ՝ դիմագրաւելու բարդութիւններով ու պայքարով լի ապագան, պատրաստ՝ մտքով, հոգով ու մարմնով նւիրւելու իր Հայրենիքի ընկերային, տնտեսական եւ քաղաքական բարօրութեան ու վերելքին, իր ազգային բարձր նպատակներին, իր ժողովրդի արդար հատուցման:

Կատարածս մատնանշումները նախ ենթադրում են չգոյութիւն, բացակայութիւն: Չափազանցութիւն չի լինի հաստատումս, թէ, ամենուրեք տարւած

բոլոր ճիգերոջ հանդերձ, այսօրւայ աշխարհաքաղաքական պայմաններում ու գլոբալիզմի ճամբան բռնած մարդկութեան ընկերութեան մէջ հայ երիտասարդը չի պատրաստւում իր ազգային ինքնութեան ու ազգային նպատակների հետ հաշտ ու համերաշխ իր տեղը գտնելու: Սփիւռքում տարւող աշխատանքը անբաւարար է, նոյնիսկ ծայրայեղ զոհաբերութիւններն էլ զուրկ են նպատակաուղղւածութիւնից, նոր սերնդի մէկ փոքր տոկոսն է մեր ազգային կառոյցներին կապւած, մնացեալ առնւազն լուսանցքային ներկայութիւն են, կամ արդէն հիւրընկալ երկրի ընկերութեան մէջ ձուլւած, հայութիւնից ամբողջովին հեռացած: Դժբախտաբար, իբրեւ ցաւալի իրողութիւն պիտի մատնանշեմ մի փաստ Ամերիկայի մասին, որ իրողութիւն է նաեւ Սփիւռքի այլ համայնքներում. հեռացող ու ձուլւող տարրի մէջ համեմատական հաշւով մեծամասնութիւն է Հայաստանից արտագաղթած տարրը (խօսում եմ մեծամասնութեան բայց ոչ բոլորի մասին), կարծես թէ ազգային ոգին, ազգային բարոյական հասկացողութիւնը, հայ մնալու ձգտումը այնքան հիմնական կերպով չի տեղադրւել նրանց հոգիներում, որ դիմանայ ուծացման, դիմանայ օտար մշակոյթի գրաւչութեան ու ձգողական ուժին, դիմանայ անբարոյ միջոցներով արագ հարստանալու գայթակղութեան: Մեծ է այս հատւածի թողած ազդեցութիւնը, մանաւանդ՝ ամերիկահայութեան imag-ը փոխելու, հասարակական կարծիքի վրայ ընդհանուր առումով բացասական տպաւորութիւն թողնելու տեսակէտից: Մեծ է նաեւ նրա պատճառած ցնցումը գաղութի կառոյցների վրայ: Եզրակացութիւնս այն է, առանց յստակ փաստերիս շարքը երկարելու, թէ ազգային դաստիարակութիւնը նոյն նպատակաուղղւածութեամբ ու նոյն քաղաքականութեամբ պիտի դառնայ մտահոգութիւնը թէ՛ Սփիւռքում, ուր օտար է ամէն ինչ, եւ թէ՛ Հայրենիքում, ուր հայ է միջավայրը, օդը, ջուրը, կենցաղը:

Դիւրին է ձեւակերպումը բայց դժւարին՝ ծրագրաւորումը: Փորձեմ մօտենալ դժւարին լուծմանը ընդգծելով ճամբան՝ հայ հոգու պատւաստում երիտասարդ սերունդի մէջ, փոխանցում հայոց պահանջատիրութեան, իբրեւ հիմքը Հայ Դատի, որ գրաւականը պիտի դառնայ Հայ Դատի բարենպաստ լուծման ապագայում եւ իբրեւ գաղափարաբանութիւն պիտի ծառայի հայութեան երկու հատւածների տակաւ մօտեցման՝ մէկ նպատակ ու մէկ պայքար նշանաբանի հովանու ներքոյ: Այն, ինչ որ պակասում է այսօր հայ պատանու կրթութեանը իբրեւ կարեւոր բաղկացուցիչ հէնց այդ ոգին է, պահանջատիրութեան ոգին, որի հիմքում ընկած է Ցեղասպանութիւնը, իբրեւ սկզնաղբիւրը հայ ժողովրդի ցրւածութեան, իբրեւ մեկնակէտը մեր պահանջատիրութեան: Եթէ հայ երիտասարդը չգիտէ թէ ի՞նչ է Մեծ Եղեռնը - եւ ես չեմ խօսում Եղեռնի արիւնոտ, սրտաճմլիկ, հոգի պատռող պատկերների մասին, այլ նրա իմաստի, նշանակութեան, ինչպէ՞ս կարող է ըմբռնել

Թուրքիոյ ուրացումը, նրա կեցւածքն ու քաղաքականութիւնն այսօր, նրա հակահայ քարոզչութիւնը միջազգային բեմերում, մեր մշակութային կոթողների շարունակւող դիտումնաւոր փճացումը Արեւմտահայաստանի տարածքում, սփիւռքահայի հոգեբանութիւնն ու աշխարհայեացքը. ինչպէ՞ս կարրող է ճիշտ ընկալել Ղարաբաղի հարցը: Ինչպէ՞ս պիտի կարողանայ ըմբռնել ազգային ուրոյն գիծը մեր արտաքին քաղաքականութեան մէջ:

Եթէ մեր հայրենիքի կառավարութիւնը ճիշտ կողմնորոշումով Հայոց Ցեղասպանութեան ճանաչումն ու վնասից հատուցումը ընդունում է իբրեւ հիմունք իր արտաքին յարաբերութիւնների եւ ազգային քաղաքականութեան, ապա դա պիտի մտնի դպրոցներից ներս դասաժրագրի մէջ այդ քաղաքականութեան հիմերը ամրացնելու: Իմ կարծիքով, անիմաստ, եթէ չասենք ծիծաղելի, մօտեցում էր պատանի աշակերտին «խնայել», նրա հոգին չթունաւորել Եղեռնի մասին դասաւանդելով: Ամերիկայի պետական դպրոցներում փորձում ենք ներառնել տալ Հայոց Ցեղասպանութիւնը ի շարս մարդկային իրաւանց բռնաբարումների այլ օրինակների՝ աշակերտներին փոխանցելու համար այդ ոճիրների համամարդկային բնոյթն ու տարողութիւնը, վարժեցնելու նրանց այն միջոցներին, որոնցով կարելի է լսել ահազանգը, կանխատեսել եւ կանխարգիլել աշխարհի որեւէ ծայրում որեւէ ազգային խմբակցութեան կամ փոքրամասնութեան դէմ կատարւող ցեղասպանութիւնը: Միջանկեալ, Թուրքիոյ աշակերտութիւնն էլ չի սովորում հայերի դէմ իր նախորդների ի գործ դրած ցեղասպանութեան մասին. եթէ մերոնք էլ չսովորեն, մենք եւ թուրքերը էլ ի՞նչ հարց ունենք իրարու հետ:

Այստեղ չպիտի խօսեմ այն բոլոր միջոցների ու մեթոդների մասին, յատուկ դասագրքերի եւ ուսուցիչների պատրաստութեան մասին, որոնց ամբողջութիւնը հասարակ, դասական դարձած դասաւանդումը պիտի դարձնի ոգի, կենդանի գործ, պահանջատիրութեան զգացում, այսինքն՝ այն հայրենասիրութիւնը, որ պակասում է մեր երիտասարդութեանը, որին այնքան կարիքն ունենք այսօր: Հնուց եկած, աւանդական դասագրքերն ու դասատուութիւնը չեն գործում Սփիւռքում. իսկ Հայաստանում, դեռ դժբախտաբար Հայաստանի կրթական համակարգը չի ձերբազատւել համայնավար սկզբունքներից ու մեթոդաբանութիւնից. այստեղ մեծ կիրքով քանդւել է հինը, առանց յարմարագոյն նորի ստեղծումի: Սրանք մասնագիտական հարցեր են, որոնք տեղին ու ժամանակին պիտի քննւեն. բայց արծարծենք հարցը, այն դարձնենք մտահոգութիւն, առաջնահերթութիւն՝ մօտ ապագայում նրա լուծման ձեռնարկելու համար: Իսկ այս ձեռնարկութեան մէջ ես տեսնում եմ ամենաօգտակար համագործակցութիւնը Հայաստանի եւ Սփիւռքի միջեւ: